Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/06 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

20 փետրվարի 2017թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
նախագահ (ԳԱՊ)՝ Աշոտ Գրիգորյան
գնահատող անդամներ (ԳԱ)՝ Աշոտ Ավետիսյան
(ԳԱ)՝ Դավիթ Գրիգորյան
բացող անդամներ (ԲԱ)՝ Լիլիթ Մաղդեսյան
քարտուղար՝ (ՄՀմ) Հայկ Խաչատրյան

Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ 3,100,000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 20.02.2017թ.-ի ժ 11:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել են՝

N	Մասնակից	Հասցե
1	Ա/Ձ ՅՈԼԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ	ՀՀ, ք. Երևան, Նազարբեկյան թ., 31 Ա շ., բն. 6
2	«Միկրորինգ» ՍՊԸ	ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զնգ. 13շ, բն 14
3	«Յունիքոմփ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Ե. Չարենց 37
4	«Նորմա-պլյուս» ՍՊԸ	ք. Երևան, Մաշտոցի 2, տարածք 60

Մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկները.

ՀՀ դրամ /առանց ԱԱՀ/

Անվանումը	Ա/Ձ ՅՈԼԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ	Միկրորինգ ՍՊԸ	ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	Նորմա-պլյուս ՍՊԸ
Սկաներ (համակարգիչների համար)	4,000,000	**2,941,500**	3,098,000	2,977,080

ԵՏՄ անդամ երկրի արտադրության ապրանք չի առաջարկվել:

Մասնակցի հայտի գնահատում

Բոլոր մասնակիցների.

- Հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
- Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.
- Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից հայտերը գնահատվել են բավարար՝ բացառությամբ ՅՈԼԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ Ա/Ձ-ի գնային պայմանները (գնի առաջարկը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները):
- Ոչ մի մասնակից հայտը հետ չի կանչել և չի փոփոխել:

Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/06 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Միկրորինգ» ՍՊԸ-ին:

   Կողմ՝ 3, դեմ՝ 0

2. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/06 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին:

   Կողմ՝ 3, դեմ՝ 0

3. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-17/06 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի երրորդ տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-ին:

   Կողմ՝ 3, դեմ՝ 0

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ 24.02.2017թ.-ին:

   Կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝		Աշոտ Գրիգորյան
գնահատող անդամ (ԳԱ)՝		Աշոտ Ավետիսյան
(ԳԱ)՝		Դավիթ Գրիգորյան
բացող անդամներ (ԲԱ)՝		Լիլիթ Մաղդեսյան
քարտուղար՝ (ՄՀմ)		Հայկ Խաչատրյան